

ցորդսն ի հարկի կացուցաներ եւ առնոյր պանդանդս ի նոցանէն, եւ անդ ոստիկանս վերակացուս թողոյր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս Վրաց:

2 Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, եւ նեղեր զնա մեծապէս. եւ հարկաներ զերկիրն, եւ վաներ զամենայն աշխարհն Վրաց. եւ հաներ ընդ սուր զամենայն ազատս եւ զազգս նախարարացն՝ զոր եգիտ: 3 Չփառաւազեանսն հրաման տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց. եւ զբղեաշին Գուգարաց, որ յառաջն ծառայեր թագաւորին Յայոց եւ ապստամբեաց, կալեալ գլխատեր. եւ զազգն որձակոտոր առնէր, եւ զկանայսն եւ զդստերսն ի գերութիւն վարէին: 4 Սոյն աւրինակ եւ որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, եւ ի թագաւորէն Յայոց եղէն ապստամբ, զամենեսեան գլխատեր. եւ թափեր զամենայն գաւառն, եւ առնոյր պանդանդս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցաներ: 5 Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Յայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետեւ յինքն վտարեալ՝ դառնայր անտի:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս թագաւորին Աղծնեաց:

2 Դառնայր ապա զաւրավարն Մուշեղ յերկիրն Աղծնեաց, եւ հարկաներ զերկիրն ի մեծ ի հարուածս. զի եւ նոքա ապստամբեալ էին յարքայէն Յայոց: 3 Ձերբակալ արարեալ զբղեաշին Աղծնեաց, առ նմին կոտորեցին զկանայս, եւ զորդիս նոցա ի գերութիւն վարեցին. եւ զմնացեալսն ի հարկի կացուցաներ, եւ վերակացուս եւ ոստիկանս յերկիրն Աղծնեաց թողուին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Յաղագս մեծի Ծոփաց:

2 Ապա անտի ի Ծոփս մեծ արշաւեցին<sup>1</sup>. եւ նոքա էին ապստամբեալ: 3 Հարկաներ զերկիրն գաւառին Մուշեղ մեծի Ծոփաց, եւ զազգսն հաներ ընդ սուր. եւ առնոյր պանդանդս, եւ զազգն ի հարկի կացուցաներ:

1 Օրինակ մի՝ արշաւեաց